



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 17 » հուլիսի 2021 թ.

№ 511

ՈՐՈՇՈՒՄ

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների վերաբերյալ մի
շարք վարչական ակտեր անվավեր ճանաչելու մասին

Ներկայումս Հայաստանի Հանրապետության վարչական և Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարաններում վիճարկվում են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում կայացված մի շարք ստուգման ակտեր, որպիսի ստուգման իրականացման հիմքում դրված են եղել հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման հանձնարարագրեր, որոնցում հսկիչ գնման իրավական հիմքերը բացակայում են:

Հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի կանոնակարգումները՝ հարկային տեսուչները հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման շրջանակներում իրականացրել են հսկիչ գնում, որն իրավակիրառ պրակտիկայում առաջացրել է տարընկալումներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված սահմանադրորեն իր վրա դրված գործառույթը, 01.10.2021 թվականի թիվ ՎԴ/10397/05/18 վարչական գործով կայացված որոշմամբ ապահովել է ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի միատեսակ կիրառությունը:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անհրաժեշտ համարելով անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում կիրառելի լինելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասը հարկային մարմինն իրավունք է վերապահում առանց գրավոր հանձնարարագրի կամ դրանում հսկիչ գնում



իրականացնելու իրավական հիմքը վկայակոչելու հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում իրականացնել հսկիչ գնում, արձանագրել է. «հարկային մարմնին վերապահելով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության և/կամ հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգերի ու կանոնների պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրության նպատակով հսկիչ գնում (գնումներ) իրականացնելու իրավունք, օրենսդիրը միաժամանակ սահմանել է այդպիսի իրավասության իրականացման փաստական հիմքի՝ հարկային մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարագրի առկայություն: Իսկ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասն էլ ի չիք չի դարձնում պարտադիր այդ կանոնի գործածությունը, քանի որ, ինչպես նշվեց, դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում կիրառելի է համարում հսկիչ գնումների կարգն ու պայմանները կարգավորող ընթացակարգային կանոնները միայն, իսկ իրականացման համար անհրաժեշտ և պարտադիր նախադրյալների՝ գրավոր հանձնարարագրերի, նույնության կամ մեկը մյուսին լրացնելու կամ փոխարինելու վերաբերյալ որևէ բացառություն նախատեսված չէ:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում հսկիչ գնում իրականացնելու՝ Օրենսգրքով հարկային մարմնին վերապահված լիազորությունն ի չիք չի դարձնում դրանց իրականացման համար առանձին գրավոր հանձնարարագրերի կամ նույն հանձնարարագրում դրանց իրականացման իրավական հիմքերը հատուկ նշելու՝ նույն օրենսգրքով պարտադիր համարվող կանոնի գործողությունը:»

Վճռաբեկ դատարանի վերը նշված մեկնաբանությունից բխում է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման այն հանձնարարագրի հիման վրա իրականացված հսկիչ գնումը, որում հսկիչ գնման իրավական հիմքը բացակայում է, լիազորությունների վերազանցմամբ կատարված գործողություն է, ինչը հանգեցնում է վարչական ակտի անվավերության:

Այսպիսով, հաշվի առնելով, որ սույն որոշման հավելվածով վկայակոչված վարչական ակտերի հիմքում ընկած փաստերը նույնական են վերոնշյալ գործի փաստերի հետ, քանի որ առանց հսկիչ գնման հանձնարարագրի կամ առանց հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման հանձնարարագրում հսկիչ գնման իրավական հիմքի առկայության իրականացվել է հսկիչ գնում՝ ապա հավելվածով վկայակոչված վարչական ակտերը ՀՀ Վճռաբեկ դատարանի նույնանման փաստական հանգամանքներով գործով տրված որոշման լույսի ներքո ենթակա են անվավեր ճանաչման:

Նկատի ունենալով վերոգրյալը, պետական միջոցների անարդյունավետ օգտագործումից խուսափելու նպատակով, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝



ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել սույն որոշման հավելվածում նշված թվով 671 վարչական ակտերը՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների դեպքերով առաջադրված պարտավորությունների մասով:

2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատերերին իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

11/17/2021



X 

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

